

## ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՄ Երկուշաբթի, 26 Մայիսի, 2008

ՀՀՂ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը Ուրբաթ, Մայիսի 16-ին հանդիպում է ունեցել Միացեալ Նահանգներուն Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Թաթուլ Մարգարեանի հետ, որը կարճատեւ այցելութեամբ գտնուում էր Լոս Անջելոսում: Երկուստեք կապերն ու համագործակցութիւնը առաւել ամրապնդելու եւ ծաւալելու նպատակով սոյն հանդիպմանը, որը տեւել է աւելի քան մէկ ու կէս ժամ, Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան շէնքում, դեսպան Մարգարեանը տեղեկութիւններ է յայտնել է մայրաքաղաք Վաշինգտոնում ՀՀ դեսպանատան ծաւալած քաղաքական ու դիւանագիտական աշխատանքների մասին: ՀՀՂ պատուիրակութեան անդամները, որոնց թւում էին՝ Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իզմիրլեանը, Ժան Գոսագեանը, Գրիգոր Աչըքեանը, Գարեգին Խանճեանը, Անահիտ Ստեփանեանն ու Արամ Գալուստեանը, անդրադառնալով Միացեալ Նահանգների արեւմտեան ափի, մասնաւորաբար Կալիֆորնիայի հայահոծ համայնքի իւրայատկութիւններին, դեսպան Մարգարեանին ներկայացրել են շրջանի դիմագրաւած դժուարութիւններն ու մարտահրաւերները: Հանդիպման ընթացքում խօսուել է մտահոգութիւն է յայտնուել Միացեալ Նահանգներուն վերջերս նոր թափ առած ադրբեջանական դիւանագիտական շրջանակների, մասնաւորաբար Լոս Անջելոսում Ադրբեջանի գլխաւոր հիւպատոսի հակահայ քայլերի ու գործունէութեան մասին եւ շէշտուել դրանց հակադարձելու անհրաժեշտութիւնը: Հանդիպման ընթացքում Կենտրոնական Կոմիտէի անդամները անդրադարձել են նաեւ Հայաստանի նախագահական յետընտրական իրադարձութիւններին եւ մտահոգութիւն յայտնել Հայաստանի միջազգային հեղինակութեանը սպառնացող երեւոյթների վերաբերեալ: Նշելով, որ ի հետեւանս մարտեան տխուր դէպքերի, լուրջ ցնցումներ առաջացան նաեւ լոսանջելոսահայ համայնքում, Կենտրոնական Կոմիտէի անդամները յոյս են յայտնել, որ Հայաստանի իշխանութիւնները հետեւողական ծրագրերով կիրականացնեն տնտեսական եւ համակարգային անհրաժեշտ բարեփոխումներ, որպէսզի կանխուեն նման իրադարձութիւնների կրկնութիւնը: Հանդիպմանը ներկայ է եղել նաեւ Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը:



Կիրակի, Մայիսի 18-ի երեկոյեան, Գլենդէլի «Արբատ» հանդիսասրահում տեղի է ունեցել ՀՀՂ Բըրբանքի Հայ Դատի Յանձնախմբի երրորդ ամենամեայ ճաշկերոյթ-հաւաքը աւելի քան 420 հիւրերի մասնակցութեամբ: Միջոցառման գլխաւոր բանախօսն էր Միացեալ Նահանգների Կոնգրէսի 29-րդ ընտրատարածքը ներկայացնող կոնգրէսական Ադամ Շիֆը, որն իր ելոյթում նորութիւններ է հաղորդել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ Կոնգրէսի թիւ 106 բանաձեւի ընդունման ուղղութեամբ տարուող աշխատանքների մասին եւ ապա իր խորհրդածութիւններն ու տեսակէտները արտայայտել՝ Հայաստան տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական իրադարձութիւնների կապակցութեամբ: Միջոցառման ընթացքում Կոնգրէսական Շիֆին յանձնուել է նաեւ երախտագիտական յատուկ յուշանուէր՝ իր կատարած հայանպաստ գործունէութեան համար:



ՀՀՂ Նեւադայի նահանգի Հայ Դատի Յանձնախումբը վերջերս հանդիպում է ունեցել Միացեալ Նահանգների Սենատում մեծամասնութիւն կազմող Դեմոկրատական կուսակցութեան հատուածի ղեկավար, Նեւադայի նահանգի սենատոր Հարի Րիդի հետ, քննարկելով նահանգի հայութեանը յուզող ուշագրաւ հարցեր: Սենատոր Րիդը իր մտահոգութիւններ է կիսել Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպան՝ Մերի Եովանովիչի նշանակման առթիւ Սենատում կայանալիք ունկնդրութիւնների մասին: Հանդիպման ընթացքում Սենատոր Րիդը իր անվերապահ զօրակցութիւնն է յայտնել Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող թիւ 106 բանաձեւին եւ Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչների հետ քննարկել է Հայաստանի տրուող ամերիկեան յատկազումարի նուզանան, իսկ միւս կողմից Ադրբեջանին յատկացուող ամերիկեան օգնութեան մեծացման հարցերը: «Նեւադայի հայ համայնքը մեծապէս գնահատում է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ սենատոր Րիդի զօրեղ, եռանդուն եւ հետեւողական կեցուածքը», - ասել է Նեւադայի Հայ Դատի Յանձնախմբի գործիչներից Սարիկ Արմէնեանը եւ համոզմունք յայտնել, որ սենատոր Րիդն ու իր անձնակազմը որեւէ ջանք չեն խնայի Նեւադայի հայութեան ձայնը լսելի

դարձնելու Միացեալ Նահանգների Սենատում:



ՀՀԴ Օրէնջ Քաունթիի Արմէն Գարօ կոմիտէութեան կազմակերպութեամբ, Չորեքշաբթի, Մայիսի 28-ին, Լոս Անջելոսին մերձակայ Սանթա Անայի Գուգասեան հանդիսասրահում տեղի է ունեցել Մայիսի 28-ին հռչակուած Հայաստանի Անկախութեան 90-րդ տարեդարձը՝ աւելի քան 350 համակիրների ու հիւրերի, որոնց թւում Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Ամէն Լիլոյեանի մասնակցութեամբ: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Յովիկ Սալիպան, որն անդրադարձել է Մայիս 28-ի պատմական ու ազգային մեծ նշանակութեանը եւ կոչ արել միասնական ջանքերով թիկունք կանգնել Հայաստանի հզօրացմանն ու բարգաւաճմանը: Միջոցառմանը 210 հազար դոլարի նուիրատուութեամբ հանդէս է եկել Օրէնջ Քանութիի ՍՈՒ համալսարանի պրոֆեսորներից Յարութ Պարսամեանը, որը յայտարարել է, թէ սոյն գումարով ցանկանում է փակել իրեն շատ հոգեհարազատ Օրէնջ Քանութիի Հայ Կենտրոնի վերջին վճարագինը: Նա մեծապէս գնահատել է սոյն հաստատութեան ծաւալած ազգային ու մշակութային ուշագրաւ դերը շրջանի հայապահպանման գործում: Տօնակատարութեանը ելոյթ է ունեցել նաեւ գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը, որը ազգային միասնութիւնը՝ նշանաւորելով իբրեւ Մայիսի 28-ից մեզ ժառանգուած աւանդ, կոչ է արել հայրենիք-սփիւռք համատեղ ճիգերով դիմագրաւել Հայաստանի դիմագրաւած նոր մարտահրաւերները միջացգային զարգացումների հետ կապուած: Տօնակատարութիւնը խանդավառել են Գառնիկ Սարգսեանն ու Վիգէն Եագուպեանը ազգային-յեղափոխական իրենց զուգերգերով:



Կիրակի, 4 Մայիսի կէսօրից յետոյ ժամը 1-ին Սան Ֆրանցիսկոյում տեղի է ունեցել Հայ Օգնութեան Միութեան Սան Ֆրանցիսկոյի «Կարին» մասնաճիւղի հիմնադրման 75-ամեակի տօնակատարութիւնը, շուրջ 200 ՀՕՄ-ուհիների եւ համակիրների ներկայութեամբ: Միջոցառմանը ելոյթ է ունեցել մասնաճիւղի ատենապետուհի Ջիւլի Ջինգիրեանը, որը հակիրճօրէն անդրադարձել է մասնաճիւղի 75-ամեայ գործունէութեանն ու ձեռքբերումներին: Այնուհետեւ տեղի է ունեցել կանացի հազուստների նորաձեւութեան ցուցադրութիւն, որի ընթացքում ներկայացուել են բազմաթիւ նորոյթ հազուստներ:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: